

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑԻ. Երկեր. գրաքարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վազգեն Համբարձումյանի, «Անահիտ» հրատ., Երևան, 1999, 312 էջ:

VIII. դարի կրոնական և հասարակական, իմաստասիրական նշանավոր գործիչ Հովհաննես Օձնեցին թողել է արժեքավոր ժառանգություն, որին մինչև վերջերս ծանոթ էին միայն գրաքարագետները, որովհետև գոյություն ունեւր նրա երկերի միայն գրաքարյան հրատարակությունը¹: Հովհաննես Օձնեցու երկերի աշխարհաբար առաջին թարգմանությունը՝ մեր կրոնական անվանի գործիչների աշխատությունները ընթերցողների լայն շրջանին հասու դարձնելու նպատակ է հետապնդում:

Հովհաննես Օձնեցին Տաշիր գավառի Օձուն գյուղաքաղաքից էր, ազնվականական ընտանիքից: «Մանկական տարիներն անց է կացրել իմաստունների մոտ, դրա համար առավ փիլիսոփայական կոչում»², գրում է Գ. Զարբանալյանը: Այնուհետև նա իր կրթությունը ստացել է անվանի վարդապետ Թեոդորոս Քոթենավորի մոտ: Երախտապարտ աշակերտը իր ուսուցչի մասին գրում է: «Քանզի և վարժապետ վեհագոյն ունէի յԱստուծոյ սլարգևեալ ինձ. հայր միանգամայն և հրահանգող հոգեկան վարժութեանց՝ զիմն Թեոդորոս, ըստ մերումս՝ Աստուածաշնորհ՝ պատշաճեալ լեզուի»³:

Հովհաննես Օձնեցին թողել է ոչ թե միայն իմաստասիրական գործեր, այլև ճառեր, շարականներ, դավանաբանական, պաշտամունքային, ծիսական և այլ ընույթի կրոնական աշխատանքներ: 717-728 թթ. նա եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսը, և այդ տարիներին կատարել է շատ օգտակար

աշխատանք հայ ժողովրդի և հայոց եկեղեցու համար: Նա բուռն պայքար է մղել պավլիկյան աղանդավորական շարժման դեմ. այդ նպատակով 720 թ. հրավիրել է Դվինի եկեղեցական ժողովրդ, ուր ծրագիր է կազմել պավլիկյանների դեմ պայքարելու համար: Օձնեցին գրել է նաև «Ընդդէմ Պաւլիկեանց» աշխատությունը: Նրա նախածեռնությունը Մանգկերտի 726 թ. եկեղեցական ժողովում որոշում է կայացվել պահպանել հայ և ասորի միաբնակ եկեղեցիների միասնությունը:

Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.), Եփեսոսի (431 թ.), Շահապիվանի, Դվինի, Կարինի և եկեղեցական այլ ժողովներում ընդունված կանոնների հիման վրա Հովհաննես Օձնեցին հավաքել, մշակել ու կազմել է «Կանոնագիրք Հայոց»-ը, որում տեղ են գտել 24 կանոնախմբեր Հայոց եկեղեցու պաշտամունքի, դավանանքի, ծիսակատարությունների, հոգևորականների կենցաղի, հայ ավատական հասարակարգի կառուցվածքի, ամուսնություն, ընտանիքի, հանգստի և այլ հարցերի վերաբերյալ: X-XVII դարերում «Կանոնագիրք Հայոց»-ը համայրվել է նոր կանոնախմբերով և կանոններով: 1960-ական թվականներին «Կանոնագիրք Հայոց»-ի առավել ամբողջական հրատարակությունը իրականացրել է պատմաբան Վազգեն Հակոբյանը⁴: Այս նոր կանոնագրքի երկու հատորներում կան 57 կանոնախմբեր և 1332 կանոններ:

Հովհաննես Օձնեցու մասին վկայությունների ենք հանդիպում X դարի պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու և XIII դարի պատմիչ, եկեղեցական գործիչ Կիրակոս Գանձակեցու

1 Յովհաննուս իմաստասիրի Օձնեցույ մատենագրութիւնք. Վենետիկ, 1833:

2 Գ. Զարբանալյան. Հայկական հին դարերի վեներտիկ, 1897, էջ 477:

3 Յովհաննուս իմաստասիրի Օձնեցույ մատենագրութիւնք, էջ 4:

4 Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վ. Ա. Հակոբյանի. հ. 1-2, Երևան, 1964-1971:

աատմություններում: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Նրանից (Եղիայ Հայրապետից - Կ թ.) Հետո սուրբ աթոռին Հաջորդում է Հովհաննես մեծ իմաստասերը, որը Հմուտ ու տեղյակ էր բոլոր քերթողական գրվածքներին, խոսքի մասերին ու մասունքներին: ... Նաև էլ ավելի Հմտորեն գրի առնելով Քրիստոսի եկեղեցուն է տալիս պաշտամունքի ժամերի ամբողջ կարգն ու կանոնները՝ եկեղեցու կղերականների մխիթարության Համար զեղեցիկ Հորինվածքով ճոխացնելով ու մեկառմեկ րացահայտելով կարգերի մեկնությունները»: Հովհաննես Օձնեցուն շատ բարձր է գնահատել նաև Կիրակոս Գանձակեցին. «Իսկ տեր Եղիայից Հետո կաթողիկոս է դառնում տեր Հովհաննես Օձնեցին: Նա իմաստասեր և սուրբ մարդ էր, մարմնի վայելուչ կազմվածքով, իսկ Հոգով՝ առավել ևս գեղեցիկ»⁵:

Հովհաննես Օձնեցու երկերի աշխարհարար առաջին թարգմանությունն սույն Հրատարակությունը բաղկացած է թարգմանչի առաջաբանից (էջ 5-18) և Հեղինակի տաննակ աշխատություններից (էջ 19-254) ու 781 ծանոթագրություններից (էջ 255-310):

Առաջարանում Վ. Համբարձումյանը ըստ արժանվույն գնահատում է Հովհաննես Օձնեցու թողած գրական ժառանգությունը՝ նշելով, որ նա բազմաժանր ստեղծագործող է և թողել է եկեղեցական ու իմաստասիրական հարուստ ժառանգություն: Հայտնի իրողությունն է, որ Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն VIII դարի առաջին կեսի գրաբարն է, ե «Մեծ ճառասացի գրավոր խոսքում այդ գրաբարը դեռևս պահում է իր կանոնականությունը, դասական լեզու կոչվելու փայլն ու հզորությունը» (էջ 8):

⁵ Հ ո վ հ ա ն ն Ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս խ ա ն ա կ Ե ր տ ց ի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի. Երևան, 1996, էջ 103-105:

⁶ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ Ե ց ի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 67 (մեջբերումը տրվում է մեր թարգմանությունում):

Հովհաննես Օձնեցին եղել է ժամանակի ակտիվ գործիչներից մեկը, որը անպայման արձագանքել ու իր խոսքն է ասել Հասարակական երևույթների վերաբերյալ: Ասվածի լավագույն ապացույցն են նրա «Ատենաբանությունը», «Ընդդեմ երևութականների», «Ընդդեմ պավլիկյանների» աշխատությունները: Հավատացյալ ժողովրդի Հանդեպ նրա ունեցած Հոգատար վերաբերմունքի արդյունք են նրա «Քրիստոսի եկեղեցու կարգերի մասին», «Եկեղեցու կարգերի մասին», «Մեծ կիրակիի մասին», «Գիշերային ժամի մասին» կրոնական բովանդակությամբ գործերը:

Կաթողիկոս եղած ժամանակ Հովհաննես Օձնեցին ջանք ու եռանդ չի խնայել ամրացնելու Հայոց եկեղեցու Հիմքերը, ժողովրդին սերտորեն կապելու եկեղեցու Հետ, մարդկանց մեջ ամրացնելու Հայոց Հավատքը: «Այս տեսակետից, կարծում ենք, գրում է թարգմանիչը, Հովհաննես Օձնեցու արածը թերևս կարելի է Համեմատել միայն Գրիգոր Լուսավորչի, իսկ Հետագա ժամանակներում՝ Միմեոն Երևանցու արածի Հետ» (էջ 11):

Հովհաննես Օձնեցին, որպես իմաստասեր, իմացաբանության և դոյաբանության Հարցերում Հետևել է Արիստոտելի Հայացքներին և շատ Հաճախ այնպիսի մտքեր է արտահայտել, որոնց ճշգրտությունը Հաստատվել է շատ ավելի ուշ: Այսպես, օրինակ, նա ճիշտ է Համարում իմացության այն ուղին, որն ընթանում է դադափարից դեպի իրը: Եվ ըստ նրա, բառն իբրև անվանում պայմանականորեն է կապվում իրի Հետ, այսինքն՝ իրի և նրա անվան միջև եղած կապը պատահական է: Նա մեծ տեղ է տալիս զգայության դերին իմացության գոյծրնթացում զգայությունը Համարելով ճանաչողության աղբյուրներից մեկը: Օձնեցին ինքնատիպ կարծիք է Հայտնում իրի քայքայման մասին՝ քայքայման պատճառ Համարելով ապականությունը, որի ազդեցությամբ փոփոխություններ են կատարվում իրի մասերի Հետ, և նա քայքայվում է: Նա այդպես է բացատրում նաև մահը. դա մարմնի քայքայումն է, որն էլ տեղի է ունենում նրանում կատարվող փոփոխություններով (էջ 117-119):

Կարծում ենք, որ Հովհաննես Օձնեցու երկերի աշխարհարար թարգմանությունն այսքան ուշացումը պայմանավորված է նրա երկերի խրթնաբան լեզվով ու ոճով, ինչպես նաև Հունաբան Հայերենով Հագեցած լինելով: Եվ ահա այսօր ունենք Հովհաննես Օձնեցու երկերի աշխարհարար բարձրորակ թարգմանություն: Կարծում ենք, թարգմանության Հաջողությունը պայմանավորված է թարգմանչի ոչ թե միայն գրաբարի, այլև լատիններենի լավ իմացությամբ: Վերջինիս շնորհիվ թարգմանիչը ի վիճակի է եղել օգտվելու Հովհաննես Օձնեցու երկերի լատիններեն թարգմանությունից, որը կատարել է մեծ բառարանագիր, աստվածաբան, թարգմանիչ Մկրտիչ Ավգերյանը:

Սույն թարգմանությունը կատարված է մեծ պատասխանատվությամբ, բարձր ճաշակով ու գրական մաքուր Հայերենով: Դրանում Համոզվելու Համար բերենք գրաբար-աշխարհարար զուգադիր մեկ Հատված:

Գրաբար

Քանզի և վարժապետ վեհագոյն ունէի յԱստուծոյ պարգևեալ ինձ, Հայր միանգամայն և Հրահանգող Հոգեկան վարժութեանց՝ զիմն թէ՛ողորոս, ըստ մերումս՝ Աստուածաշնորհ՝ պատշաճեալ լեզուի. որ ոչ զառ յինքենէն ևեթ բաւականայր շտեմարանել յիմումս ոգւոջ զբարին, այլ ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաքաղ առնելով զչնորՀաց, լիացուցանել զագահութեան իւրոյ ինեւ ջանայր զուսումնասիրութիւն. և գրեթէ յազգմանէ Հոգւոյն՝ զլինելոցս նախատեսեալ, զառ ի յոքունցն Հավաքեալ պատրաստէր լինել բազմաց պիտոյից նիւթ, ծածկաբար զԱստուծոյսն առ իս բարբառելով. «Կե՛ր մանր զմատեանդ զայգ» պատգամատարդ Հրաւիրեալ լինել իսրայէլեանն ազիւն⁷:

Աշխարհարար

Քանի որ նաև ունեի Աստուծոյ ինձ պարգև տրված լավագույն իմ ուսուցիչ Թեոդորոսին՝ միաժամանակ Հայր և Հոգևոր պարապմունքների ուսուցանող, մեր լեզվով ասած՝ Աստվածաշնորհ: Որն էլ բավական չէր Համարում, որ իմ մեջ կուտակում էր Հոգու բարին, նաև Հաճախ (իր) շնորհներից պայծառագույնները ծաղկաքաղ անելով ջանում էր ինձանով լրացնել ուսման ձգտելու իր սերը: Եվ թերևս Հոգու ներշնչումից, լինելիքները կանխատեսելով, շատ բաներից նյութ էր Հավաքում, պատրաստում էր բազում պետքերի (Համար)՝ ծածուկ ձևով Աստուծունը խոսքով ինձ ուղղելով. «Մանր-մանր կե՛ր այգ մագաղաթը», որ լինես իսրայելյան ցեղի շնորհյալ պատգամատար (էջ 22):

Թարգմանությունը շահել է նաև կցված շուրջ ութ Հարյուր ծանոթագրություններով, որոնցում մեկնաբանված են մեծ իմաստասերի ու կրոնական գործչի աստվածաբանական, իմաստասիրական Հայացքները, նրա երկի լեզվաոճական օրինաչափություններն ու յուրահատկությունները:

Կարծում ենք, սույն Հրատարակությունը կշահեր, եթե ունենար նաև անվանացանկ, որն է՝ ավելի կհեշտացներ գրքից օգտվողի աշխատանքը: Թերություններից է նաև այն, որ Օձնեցու «Նույնի կանոնները» (էջ 54-68) աշխատությունը չնայած թարգմանված է ու բնագրում նշված են 32 ծանոթագրություն, բայց աշխատության խորագիրն ու ծանոթագրությունները տեղ չեն գտել գրքում:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆԹԱՆ

7 Յովհաննու Իմաստասիրի Օձնեցույ մատենագրութիւնք, էջ 2: